Արձանագրություն N 2

«ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2025/2» ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

09 հունիսի, 2025թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի նախագահ

Գ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ Ն. Մանուկյան

/ԳՊ/ԳԱ/՝ Ա. Առուշանյան

/ԳՊ/ԲԱ/՝ Ն. Պետրոսյան

/ԳՊ/ԲԱ/՝ Մ. Եսայան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ Լ. Ադամյան

1. «ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2025/2» ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2025թ.-ի հունիսի 9-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի անվանումը	Տվյալները
1	ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 8, հեռ. 010 22 26 20
2	«Բիոնկոդ» ՍՊԸ	Հակոբ Հակոբյան 3, հեռ. +37460755888, +37444755888

3. Հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերի գնահատումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

«ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2025/2» ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

23 հունիսի 2025թ.
Ժամը՝ 12:00

4. Հայտերի բացման արդյունքում արձանագրվեց, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կցվել և ներկայացվել են պատշաճ: Ներկայացված հայտերի գնահատման արդյունքում արձանագրվեց, որ ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, իսկ «Բիոնկոդ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝ դիմում-հայտարարության մեջ սխալ է նշված գնման ընթացակարգի ծածկագիրը և պատվիրատուի անվանումը. Հասմիկ Վանիկի Հայրապետյանի որակավորումը հավաստող փաստաթղթերում նշված է Սեղբոսյան Հասմիկ, ուստի անհրաժեշտ է ներկայացնել ազգանվան փոփոխությունը հավաստող փաստաթուղթ, ինչպես նաև չի ներկայացվել դիպլոմը. ներկայացված պայմանագրում նշված չէ պայմանագրի կնքման ամսաթիվը, առկա է անհամապատասխանություն Նարինե Ալեքսանյանի ծննդյան տարեթվի հետ, ինչպես նաև առկա է ուսման տևողության ամիսների և արժեքի անհամապատասխանություն՝ ներկայացված պայմանագրում և հաշիվ-ապրանքագրում. ներկայացված Հավելված 1.1 -ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչպես նաև Հավելվածում 1.1 -ում

Անահիտ Արամի մուրադյանի աշխատած ժամանակահատվածի և ներկայացված աշխատանքային տեղեկությունների (անհատական հաշիվ) հետ առկա են անհամապատասխանություններ:

5. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

6. Հանձնաժողովն արձանագրեց, որ հրավերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել:

7. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

ՀՀ դրամ

Չափաբաժնի համարը	Գնման առարկայի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Գնման առարկայի գնման ընդհանուր գինը	Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը *			
					ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ		«Բիոնկոդ» ՍՊԸ	
					Գնային առաջարկը		Գնային առաջարկը	
					առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ	առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/	ներառյալ ԱԱՀ
1	Աշխատակիցների վերապատրաստման ծառայություններ	դրամ	1	720000	577416.67	692900	690000	-

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

8. Հանձնաժողովն որոշեց հրավերով սահմանված կարգով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և «Բիոնկոդ» ՍՊԸ -ին առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

9. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 2025 թվականի հունիսի 25-ին, ժամը 12:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 3 հասցեով, 615 աշխատասենյակում:

«ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2025/2» ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն

25 հունիսի 2025թ.
Ժամը՝ 12:00

10. Հանձնաժողովն արձանագրեց, որ «Բիոնկոդ» ՍՊԸ -ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են և ներկայացվել են շտկված փաստաթղթերը, ուստի հանձնաժողովը որոշեց «Բիոնկոդ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

11. Ներկայացված հայտի հիման վրա «ՀՀ ՎԿ-ԲՄԽԾՁԲ-2025/2» ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել ՀՀ պետական կառավարման ակադեմիա ՊՈԱԿ-ին, իսկ այդպիսին չճանաչված մասնակից՝ «Բիոնկոդ» ՍՊԸ-ին:

12. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

13. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գնահատող հանձնաժողովի նախագահ
/ԳՊ/ԳԱՊ/՝ _____ Գ. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ _____ Ն. Մանուկյան

/ԳՊ/ԳԱ/՝ _____ Ա. Առուշանյան

/ԳՊ/ԲԱ/՝ _____ Ն. Պետրոսյան

/ԳՊ/ԲԱ/՝ _____ Մ. Եսայան

Քարտուղար՝ /ԳՊ/ՄԻՄ/ _____ Լ. Ադամյան